

Հայ-թուրքական բանակցությունները Կ.Պոլսի կոնֆերանսում

Ղուլյան Յուրիկ

Հանգուցային բառեր. Հայաստանի Հանրապետություն, Թուրքիա, Բաթում, Բրեստ-Լիտովսկ, Ղարաբաղ, Ջանգեզուր, կոնֆեդերացիա

Նախաբան

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Թուրքիայի ու Անդրկովկասյան նորանկախ հանրապետությունների միջև պայմանագրի կնքումը տեղի ունեցավ առանց Քառյակ միության գծով Թուրքիայի դաշնակիցներ Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի մասնակցության: Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան գտնում էին, որ այդ պայմանագրերը ընդունելի չեն, քանի որ կնքվել են առանց դաշնակիցների մասնակցության [15, 511]: Այդ հանգամանքը նյարդայնացնում էր հատկապես Գերմանիային: Գերմանիան մտադիր չէր իր տնտեսական շահերը զոհաբերելու Թուրքիայի քաղաքական նպատակներին ու հիմնվելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վրա՝ հանդես եկավ Բաթումում ընդունված որոշումները վերանայելու առաջարկությամբ: Նախատեսվեց հունիսի 25-ին Կ. Պոլսում Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի, Թուրքիայի և Անդրկովկասյան հանրապետությունների միջև հրավիրել խաղաղության կոնֆերանս, որտեղ պետք է կարգավորվեին Թուրքիայի և Անդրկովկասյան հանրապետությունների չլուծված խնդիրները, ինչպես նաև այդ հանրապետությունների սահմանային հարցերը [9, 186]: Գերմանիայի, Ավստրիայի և Բուլղարիայի ներկայացուցիչները հայկական պատվիրակությանը հավաստիացումներ էին տալիս, որ պիտի աշխատեն Անդրկովկասի սահմանները գծել համաձայն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի: Հայկական կողմը հույս ուներ, որ Թուրքիայի դաշնակիցների այդ հավաստիացումները սին խոստումներ չեն [4, 177]:

Հայ-թուրքական բանակցությունները

Կոնֆերանսի մասին հայկական կառավարությունը տեղեկացվեց գերմանական ներկայացուցչի կողմից: Գերմանիայի բարյացակամությանը ձգտող Հայաստանի Հանրապետությունը փորձեց օգտվել դաշնակիցների այդ հակասությունից: Հայոց Ազգային խորհրդի Կ. Պոլիս պատ-

վիրակությունն ուղարկելու որոշման հիմքում Թուրքիայի արդարադատության նախարար Հալիլ բեյից ստացված հեռագիրն էր, որում նա Թալեաթ փաշայի անունից Հայաստանի ներկայացուցիչներին հրավիրել էր մասնակցելու Թուրքիայի, նրա դաշնակիցների և Անդրկովկասյան հանրապետությունների միջև կայանալիք բանակցություններին:

Բաթումի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո հայկական պատվիրակությունը վերադարձավ Թիֆլիս և Ազգային խորհրդի հունիսի 12-ի որոշմամբ [1, 263] ու նրա կողմից նոր հրահանգներ ստանալով՝ մեկնեց Կ. Պոլիս՝ մասնակցելու կոնֆերանսին: Պատվիրակությունը մի խնդիր ուներ՝ իրականացնել Ազգային խորհրդի և նոր ստեղծված կառավարության ղեկավար սկզբունքը՝ ապահովելու հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը: Հայկական պատվիրակության գործունեությունը նպատակաուղղված էր լինելու հայ ժողովրդի շահերի տեսանկյունից ծանր ու անընդունելի Բաթումի պայմանագրի համեմատ ավելի նպաստավոր պայմանագրի ստորագրումն ապահովելուն [5, 109]: Հայաստանի Հանրապետության համար կենսական էին նրա անկախության միջազգային ճանաչումը, պետության սահմանների ընդլայնումն ու դրանց անվտանգությունը, ժողովրդի կյանքի խաղաղ պայմանների ապահովումը [5, 107]:

1918 թ. հունիսի 13-ին Թիֆլիսից ճանապարհ ընկած հայկական պատվիրակությունը Ավետիս Ահարոնյանի նախագահությամբ Կ. Պոլիս է հասնում հունիսի 19-ին [2, 119]: Պատվիրակությունը հունիսի 22-ին այցելում է Թալեաթին, Էնվերին, Ջեմալին, Հալիլին, Կ. Պոլսում գերմանական դեսպան Բերնսդորֆին: Հատկապես նվաստացուցիչ էին հանդիպումները մեծ վեզիր Թալեաթի և ռազմական նախարար Էնվերի հետ: Առաջին իսկ հանդիպումների ժամանակ հայկական պատվիրակությունը Թալեաթ փաշային, ապա նաև Էնվերին ներկայացնում են Հայաստանի ազգաբնակչության սարսափելի կացությունը, գաղթականների թշվառ վիճակը, հանրապետության սահմանափակ տարածքների պատճառով կենսագործունեության հնարավորության բացակայությունը [1, 264]: Թալեաթ փաշան առանձին կարևորություն չսովեց Հայաստանի անկախության հռչակագրին և հայ ժողովրդին հուզող կենսական խնդիրների վերաբերյալ հայ պատվիրակների ներկայացրած փաստաթղթերին: Էնվեր փաշային ներկայացրած նախագծով հայկական կողմը ակնկալում էր Թուրքիայից ետ ստանալ Սուրմալուն, Նախիջևանը, Ախալքալաքը և այն տարածքները, որ Թուրքիային էին անցել Բաթումի պայմանագրով:

Հայ պատվիրակները այցելությունից տպավորություն են ստանում, որ թուրքերը ցանկանում են կոնֆերանսը վեր ածել հասարակ ձևականության: Թուրքերը շեշտում էին, որ Բաթումում ամեն ինչ վերջացած է, դաշնագիրը ստորագրված, ուստի պետք էր, որ միայն ձևականորեն ստորագրեին նաև տերությունները [2, 171]: Թուրքական բարձրաստիճան պաշտոնյաները հանդիպումների ընթացքում վերացական ու խուսափողական պատասխան տվեցին պատվիրակների գործնական հարցադրմանը ցեղասպանության հետևանքով հայրենագրված հայ գաղթականների տունդարձը կազմակերպելու և ներքին կյանքը կարգավորելու վերաբերյալ:

Իր կենսական տարածքների ընդլայնմանը ձգտող ՀՀ պատվիրակությունը մի շարք փորձեր արեց Թուրքիայի դեկավարներին ՀՀ մտահոգությունները ներկայացնելու ուղղությամբ՝ արժարծելով նաև տարածքային հարցեր [1, 264]: Մասնավորապես նման հանդիպում կայացավ հայկական պատվիրակության և թուրքական կողմի միջև՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը Հայաստանի Հանրապետությանը տալու հարցի շուրջ, որին թուրքական կողմը վճռականորեն դեմ արտահայտվեց [10, 206]: Ղարաբաղի հարցում Թուրքիան անվերապահ աջակցում էր Ադրբեջանին: «Թուրքերը լավ ծանոթ էին մեր ծրագիրներուն և ձգտումներուն, բայց չէին ուզեր որ գոյություն ունենա կենսունակ Հայաստան մը: Անոնք դեմ էին, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը կցվեին Հայաստանին, որովհետև կուզեին բաց պահել իրենց ճամբան դեպի Պաքու» [3, 99],- գրում է պատվիրակության անդամ Ալեքսանդր Խատիսյանը: Ղարաբաղը Ադրբեջանին տալու հարցը Թալեաթը հիմնավորում էր նրանով, որ «այստեղ տեղական թուրքերը սարն են բարձրանում և այդ պատճառով անհնարին է այդ երկիրը տալ Հայաստանին»: Իրականում Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելը քաղաքական նպատակ էր հետապնդում, որով Թուրքիան նախատեսում էր թյուրքական աշխարհին կապող միջանցքը վերահսկողության տակ վերցնել: Ավ. Ահարոնյանը արդարադատության նախարար Հալիլ բեյին հայերի կողմից խնդրում է իրենց հանձնել Բրեստ-Լիտովսկի պայմանագրով սահմանված ողջ տարածքը, իսկ Ղարաբաղի հարցը թողնել Կովկասում լուծման համար: Հալիլը, որոշակի պատասխան չտալով, նշում է, որ Ղարաբաղը կարող է դառնալ ինքնավար կանտոն Ադրբեջանի կազմում [3, 99]:

Թեև Կ. Պոլսի կոնֆերանսի մասնակիցները վաղուց ժամանել էին, սակայն կոնֆերանսի աշխատանքների սկիզբը անընդհատ հետաձգվում

եր: Կոնֆերանսն առաջարկվել էր բացել հունիսին, բայց հետաձգվեց երեք շաբաթով, որը պայմանավորված էր այդ ժամանակ Գերմանիայի ու Թուրքիայի միջև ընթացող բանակցություններով:

Հուլիսի 4-ին Ավ. Ահարոնյանը Կ. Պոլսից հաղորդում էր, որ «Կոնֆերանսը կսկսի երկու շաբաթից» [4, 177], իսկ հուլիսի 23-ին հեռագրով հայտնում է, որ կոնֆերանսի բացման վերաբերյալ դեռևս հստակություն չկա [12]: Նոր կոնֆերանսի հրավիրումը Թուրքիայի շահերից չէր բխում, ուստի Թուրքիան ամեն կերպ խոչընդոտում էր կոնֆերանսի կայացմանը:

Մինչ կոնֆերանսի աշխատանքների սկսվելը ՀՀ պատվիրակությունը [16, 49] տարածքային ու փախստականների հարցերով շարունակում էր բանակցությունները թուրքերի հետ: Հայկական պատվիրակության կողմից թուրքական կառավարությանը հանձնվեցին քարտեզներ, ինչպես նաև տնտեսական, պատմական, աշխարհագրական բնույթի զեկուցագրեր, տեղեկանքներ ու հուշագրեր [11]: Կ. Պոլսում գտնվող հայկական պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանը Բաթումում գտնվող հայկական պատվիրակության ղեկավար Սամսոն Հարությունյանին հուլիսի 4-ին ուղարկած հեռագրում պահանջում էր. «հատուկ ցրիչի միջոցով մանրամասն նամակներ և Հայաստանի 20 վերստ մասշտաբով տասնյակ քարտեզներ ուղարկեք» [4, 177]: ՀՀ պատվիրակությունը, սպասելով Կ. Պոլսում կոնֆերանսի բացմանը, շարունակում էր բանակցությունները թուրքերի հետ տարածքային ու փախստականների հարցերով՝ որպես «առավել սուր հանդիսացող» [16, 49]: Թուրքական կողմից շողոքորթությունների պակաս չկար, գաղթականների վերադարձի խնդրում առատ խոստումներ էին տալիս, սակայն գործնական քայլերը բացակայում էին: Ազգային խորհրդին զեկուցելով բոլոր հանդիպումների արդյունքների մասին՝ պատվիրակության ղիվանի պետ Հ. Քոչարյանը գրում էր. «ընդհանրապես, խոսքերով պատասխանները գոհացուցիչ են, բայց ինչպես կլինի գործով՝ տեսնենք»: Թուրքիայի ղեկավար շրջանները գործնականում հայկական պատվիրակության առաջադրած հարցերին և ոչ մի լուծում չտվեցին, թեև ջանք չէին խնայում քարոզչական մեքենայի միջոցով եվրոպական հասարակության մեջ թուրք-հայկական բարեկամության վերաբերյալ թյուր կարծիք ձևավորելու ուղղությամբ, որից իբր թե հայերը բավարարված են ու գործում են թուրքերի հետ համատեղ [1, 266]:

Հուլիսի 18-ի նիստին մասնակցած Մուխտար բեյը Էնվեր փաշայի անունից խնդրում է իրեն տրամադրել հայկական կողմի ներկայացրած

քարտեզը և ցույց տալ հայերի ակնկալած սահմանները: Նոր փոփոխված սահմաններով ու բացատրություններով քարտեզը էնվեր փաշային հանձնելու համար հուլիսի 22-ին ներկայացվում է Մուխտար բեյին:

Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի կողմից Բրեստի դաշնագրի վավերացման մասին հայ պատվիրակները տեղեկացան հուլիսի առաջին կեսին: Դաշնագրերը վավերացնելու ցանկություն էր հայտնել և Հազգը փաշան՝ վերապահումով, որ Բրեստի պայմանագիրը ընդունում են այն չափով, ինչ չափով այն չի հակասում Բաթումի պայմանագրին [1, 277]: Թուրքերն ամեն կերպ փորձում էին կառչած մնալ Բաթումի պայմանագրից, հատկապես այն կետերից, որոնք վերաբերում էին Հայաստանին:

Հայ-թուրքական բանակցություններում որոշակի առաջընթաց է նկատվում հուլիսի վերջին: Օգոստոսի 1-ին պատվիրակությունը հեռագրով ՀՀ կառավարությանը տեղեկացրեց օսմանյան նախարարների խորհուրդի ընդունած որոշման մասին, համաձայն որի՝ փախստականները կարող էին առանց որևէ արգելքի վերադառնալ Բաթումի շրջան ու Ալեքսանդրապոլի մերձակայք: Մնացած փախստականների հարցը մնում էր բաց, երկաթուղային ճանապարհների կառավարումը և դրանց շահագործումը հայկական ամբողջ տարածքում հանձնվում էր հանրապետության կառավարությանը, բայց թուրքերը պահպանում էին գծի երկայնքով իրենց զինվորական խմբերը... թուրքական կառավարությունը բանակային կորպուսի հրամանատար Մեհմեդ Ալի փաշային նշանակեց ՀՀ կառավարությանը կից դիվանագիտական ու զինվորական ներկայացուցիչ [16, 51]:

Հետագա բանակցությունները պետք է տարվեին ԱԳ նախարար Նեսսիմ բեյի հետ: Սակայն իր կառավարությունից երկուս ու կես ամսից ավելի տեղեկություններ չունենալով՝ պատվիրակությունը Նեսսիմ բեյի հետ տեսակցում է միայն 9-10 օր անց, իսկ այդ ընթացքում հայերի նկատմամբ թուրքերի անվստահությունը միայն ուժեղանում է: Բաքվում հայերի դերը, Անդրանիկի գործողությունները, Պարսկաստանում անգլիացիների հետ կապը, Փարիզում Պողոս Նուբարի քայլերը, դիվանագիտական աշխատանքը Բեռլինում, ռուսների նկատմամբ համակրանքը, Բաթումի պայմանագիրը չվավերացնելը, պատվիրակության մեծ զսպվածությունը անվստահության այն պատճառներն էին, որոնց վրա թուրքերը հենվում էին: Էնվեր փաշան պատվիրակության հետ բանակցություններում նշում էր, որ Հայաստանը «հետևում է Հունաստանի քաղաքականու-

թյանը» [16, 59], այսինքն՝ քաղաքականություն երկու ճակատով:

Գերմանիայի ու Խորհրդային Ռուսաստանի միջև 1918 թ. օգոստոսի 27-ին կնքված լրացուցիչ պայմանագիրը անակնկալի է բերում թուրքերին, որով Բաքվի նավթի արտադրանքի մեկ քառորդը տրվում էր գերմանացիներին: Թալեաթը մեկնում է Բեռլին՝ գերմանական կառավարության հետ բանակցելու: Նա Կ.Պոլսից մեկնելուց առաջ, ընդունելով հայ պատվիրակներին, նրանց հայտարարում է, որ գերմանա-ռուսական պայմանագրով միայն Վրաստանն է ճանաչվել դե ֆակտո, իսկ Հայաստանն ու Ադրբեջանը՝ ոչ: Ելնելով դրանից՝ նա հայ պատվիրակներին առաջարկում է թուրքերի հետ համագործակցել՝ խոստանալով ընդլայնել տալ Հայաստանի սահմանները [8, 299]: Սեպտեմբերի 3-ին՝ Բեռլին ու Վիեննա մեկնելուց առաջ, Թալեաթ փաշան ընդունում է Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը, որը նրան հավաստիացնում է, որ Հայաստանը իր տարածքների վերադարձի դեպքում պատրաստ է Թուրքիայի հետ փոխադարձ զիջումների [16, 60]: Գերմանական ու ավստրիական աղբյուրները վկայում են, որ Թալեաթ փաշան իրականում Վիեննայի ու Բեռլինի խորհրդակցությունների ժամանակ այնպիսի ջանասիրությամբ էր պաշտպանում հայկական «անկախությունը», որ Թուրքիայի դաշնակիցների մոտ որոշ կասկածներ էր առաջ բերում:

1918 թ. սեպտեմբերի կեսերին Կ. Պոլիս է գալիս Հայաստանի խորհրդարանի անդամ Արտաշես Բաբայանը, որը մանրամասն զեկուցում է թե՛ պատվիրակությանը և թե՛ կառավարությանը հետաքրքրող բոլոր խնդիրների մասին: «Առհասարակ Ա. Բաբայանի ասելով, այժմյան քաղաքական իրադրությունը այնպես է, որ մենք չպետք է զիջող լինենք մեր տարածքային պահանջների վերաբերմամբ» [1, 247],- կարդում ենք պատվիրակության օրագրի սեպտեմբերի 14-ի թիվ 22-րդ նիստի գրառումից: Ա. Բաբայանի զեկուցումից բխող խնդիրները պատվիրակությունը քննարկում է սեպտեմբերի 15-ին կայացած ժողովում ու որոշում դրանցից կարևորների մասին առանձին դիմումներ հղել արտաքին գործերի նախարար Նեսսիմի բեյին և Էնվեր փաշային:

Հայ-թուրքական բանակցությունների ընթացքում քննարկվող հիմնական հարցերից մեկը վերաբերում էր Թուրքիայի ու Հայաստանի միջև միություն ստեղծելու հարցին: Թուրքիայից, Ադրբեջանից, Հայաստանից և Հյուսիսային Կովկասից կազմվելիք Արևելյան դաշնության գաղափարը առաջ էր քաշել հայտնի պանթուրքիստ, հրապարակախոս, ծագումով անդրկովկասյան թուրք Ահմեդ Աղանը: Դեռևս հունիսին Էնվեր փաշայի

հետ հայկական պատվիրակության առաջին հանդիպման ընթացքում նա խոսակցություն է բացում Թուրքիայի ու Հայաստանի միջև միության մասին: Էնվեր փաշան, հայերին կշտամբելով օսմանյան հայրենիքի նկատմամբ անհավատարմության, Ռուսաստանի և Անգլիայի հետ հույսեր կապելու համար Հայաստանի կառավարությունից պահանջում էր Թուրքիայի հետ լինել «ոչ միայն լավ հարևաններ, այլև լավ դաշնակիցներ», նրա հետ մտնել համադաշնության մեջ, կնքել «սրտակից համաձայնություն» [5, 110]: Էնվեր փաշայի նախագիծը Հայաստանի կառավարության մոտ ոչ մի խանդավառություն չառաջացրեց, ուստի հայկական կողմը չէր շտապում պատասխանի հարցում՝ համարելով, որ երկու այդքան անհամեմատելի մեծությունների միջև միությունը փաստորեն հանգեցնելու է Հայաստանի ամբողջական ենթարկվածությանը Թուրքիային: Իր հերթին Էնվերը հայերի հանդեպ հավատ չէր տածում: Դա պարզ երևաց օգոստոսի 20-ին նրանց մեկուկես ժամ տևած հանդիպման ժամանակ, որի ընթացքում Էնվերը հայկական պատվիրակությանը հայտարարեց, որ ինքը հայերի հանդեպ հավատ չի տածում, քանի որ նրանք նահանջի ժամանակ կարող են հարձակվել թուրքերի վրա: Նա հայտարարում է, որ Թուրքիան կարող է Հայաստանին վերադարձնել Ալեքսանդրապոլը, Ախալքալաքը և որոշ այլ շրջաններ, բայց անհրաժեշտ է համարում, որ Հայաստանը նախ և առաջ հրաժարվի իր չեզոքության քաղաքականությունից և Թուրքիայի հետ ստորագրի համադաշնության մասին պայմանագիր՝ մնալով ինքնիշխան կողմ, կամ սրտալից համաձայնագիր, առանց Թուրքիայի թշնամիների դեմ իր գործերն օգտագործելու պարտավորության, բայց պարտավորվելով պաշտպանել երկաթգծերը և թիկունքը, ինչպես նաև ցուցաբերի այլ ծառայություններ: Էնվերը շտապում է ավելացնել, որ մինչ սրտալից համաձայնագրի կամ համադաշնության մասին պայմանագրի ստորագրումը ոչ մի կարևոր հարցեր - ոչ տարածքային, նույնիսկ փախստականների - չեն կարող ընդունվել քննարկման համար [16, 58]: Էնվերը ավելացնում է, որ պայմանագրի գործողության դադարեցման դեպքում Հայաստանը կկորցնի այն տարածքները, որ Թուրքիան պատրաստվում է նրան զիջելու: Պատվիրակությունը պատասխանում է, որ պատրաստ է քննության առնել հարցը, դրանով պարտադիր պայման դնելով հայկական տարածքների վերադարձը: Սեպտեմբերի 1-ին պատվիրակությունն անձամբ Թուրքիայի արտաքին գործերի նախարարի հետ հանդիպման ժամանակ հայտարարում է, որ սկզբունքորեն ընդունում է Էնվեր փաշայի առաջարկը՝ բարե-

կամական չեզոքության ձևով միություն կազմելու մասին և Նեսսիմ բեյին առաջարկում տրամադրել համաձայնագրի հիմքերը: Հայկական կողմը գտնում էր, որ «Մրտալից համաձայնագրի» կայացումը հնարավոր է միայն արդեն կազմավորված պետությունների միջև, Հայաստանը չի կարող դիտվել որպես կայացած պետություն, քանի դեռ նրա ներկայիս սահմանները չեն ընդլայնվել: Ավ. Ահարոնյանը նշում է, որ համաձայնագրի գլխավոր դրույթները պետք է հաղորդեն Երևան, իսկ գործի արագացման նպատակով անհրաժեշտ է համարում պատվիրակությանը շոգենավ տրամադրել, որը նրան կտաներ Կովկաս ու այնուհետ ետ կբերեր Կ. Պոլիս: Պատվիրակության առաջարկը սկզբունքորեն ընդունելով, Նեսսիմ բեյը խնդրում է իրեն մի քանի օր ժամանակ տալ վերջնական պատասխանի համար: Սեպտեմբերի 15-ին մեծ հողվածով հանդես գալով Կ. Պոլսի թերթերից մեկում՝ նա հույս է հայտնում, որ բոլոր կողմերից դաշնության մեջ մտած պետություններով շրջապատված Վրաստանը շուտով ստիպված կլինի մտնել նրա մեջ:

Կ. Պոլսում ընթացող հայ-թուրքական բանակցությունները ավելի աշխույժ ու կոնկրետացնող բնույթ ստացան սեպտեմբերի վերջերին: Ինչքան առաջին աշխարհամարտը մոտենում էր ավարտին, այնքան թուրքական կողմը զիջող էր դառնում: Վախենալով Անգլիայի ու ԱՄՆ-ի առջև ապագա պատասխանատվությունից՝ նկատելի է դառնում հայկական հարցի նկատմամբ թուրքերի դիրքորոշման փոփոխությունը:

Հայկական պատվիրակությունը սեպտեմբերի 21-ին նոր տեսակցություն ունեցավ Էնվեր փաշայի հետ: Վերջինիս հետ բանակցությունների ժամանակ պատվիրակությունը պնդեց փախստականների՝ իրենց օջախները վերադարձի լուծման վրա, խնդրեց գերեվարված հայերի ազատ արձակման և նրանց վերադարձի և այլնի մասին: Պատվիրակության նշված խնդրանքներից բավարարվեց միայն ռազմագերիների ու ոչ մեծ քանակությամբ տեղահանված քաղաքացիների վերադարձի խնդրանքը [16, 63]: Սեպտեմբերին, երբ Գերմանիան և Խորհրդային Ռուսաստանը վավերացրին լրացուցիչ պայմանագիրը, որը Կովկասը բաժանում էր ազդեցության երկու գոտիների, Էնվեր փաշան Ավ. Ահարոնյանին և Ալ. Խատիսյանին ակնարկեց, որ Թուրքիան կպաշտպաներ Հայաստանի հավակնությունները Լոռու և Փամբակի նկատմամբ և կարող է ի վերջո թույլատրել հանրապետության ծավալումը Բրեստ-Լիտովսկի պայմանագրի սահմաններում: Իթթիհադականները ավելի հակված էին այդ շրջանների ներառումը Հայաստանի, քան Վրաստանի մեջ, որը գերմա-

նական պրոտեկտորատ էր [7, 57]: Սեպտեմբերի վերջերին Թալեաթ փաշան հայտարարեց, որ իր կառավարությունը Հայաստանին ավելի մեծ զիջումներ կշնորհի, քան այնպիսիք, որոնք փնտրում էր Ավ. Ահարոնյանի պատվիրակությունը նախորդող բանակցություններում:

Հայերի դիրքը գնալով բարելավվում է՝ կապված աշխարհամարտում Թուրքիայի ու նրա դաշնակիցների մոտալուտ պարտության հետ: Հոկտեմբերի 5-ին Հալիլ բեյը Ավ. Ահարոնյանին հայտնում է, որ Թուրքիան որոշել է տարհանվել մինչ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով սահմանված սահմանը, և հիմա չգիտի, թե ինչպես բաժանի ազատագրված տարածքը անդրկովկասյան երեք երիտասարդ հանրապետությունների միջև: Հոկտեմբերի 15-ին պատվիրակությունը լինում է նոր մեծ վեզիրի՝ Իսմեթ փաշայի մոտ, զեկուցում հայկական կողմի բոլոր ցանկությունների, գլխավոր առամար՝ սահմանային հարցերի՝ ներառյալ Ղարաբաղի մասին [2, 197]:

Բոլոր հարցերը, որ վերաբերում էին Կովկասի մասնակցությանը, շատ թե քիչ լուծվեցին Բեռլինում և Վիեննայում [16, 62]: Գերմանացիները, ի դեմս գեներալ Լոսովի, Բեռլինում և Վիեննայում գտնվող հայկական պատվիրակությանը (Հ. Օհանջանյան, Ա. Զուրաբյան) խորհուրդ էին տալիս հետևողականորեն թուրքերից խնդրել վերադարձ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով սահմանված սահմաններ [2, 195]: Էնվերը, Թալեաթը, Նեսիմին, չթաքցնելով իրենց դժգոհությունը Բեռլինում հայկական պատվիրակության գտնվելու կապակցությամբ, ցանկանում էին, որ հայերը հարաբերությունների մեջ մտնեն միայն թուրքերի հետ [1, 265]: Թուրքիայի ղեկավարները փորձում էին ազդել հայկական պատվիրակության վրա, որպեսզի վերջիններս հրաժարվեն Բեռլինում ու Վիեննայում իրենց խնդիրները բարձրաձայնելուց: Ա. Չխենկելին վկայում է, որ Թալեաթը բոլորին ասում էր, թե հայերը գոհ են իրենց դրությունից, և որ իրենք հայերի հետ համաձայնության են եկել, և կարիք չկա հիմա Բեռլինում այդ խնդիրը բարձրաձայնել: Դաշնակիցների վրա այդ հայտարարությունը, թե հայերը ոչ մի պահանջ չունեն, վատ տպավորություն էր թողել [1, 290]:

ՀՀ կառավարության ու Կ. Պոլսում գտնվող պատվիրակության միջև կապը հիմնականում իրականացվում էր նամակագրությամբ ու Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության միջոցով: «Բաթումի և Փոթիի իշխանավորների հետ նավով մեզ ուղարկեք նամակներ և հատկապես հայկական և ռուսական թերթեր: Առաջին հարմար առիթով

ուղարկեք Ա. Շահխաթունյան¹ վերջերս հրատարակված գրքի 10 օրինակներ» [12, 14],– ասվում էր հայկական պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանի՝ Հայոց ազգային խորհրդին ուղարկած 1918 թ. հուլիսի 23-ի հեռագրում: Կովկասի հետ կապ պահպանելու համար թուրքական կառավարությունը իր հեռագրաթերը և փոստը դրել էր հայկական պատվիրակության տրամադրության տակ: Բայց հավաստի աղբյուրներից պատվիրակությունը իմանում է, որ նրանց հեռագրատներում թվերը աղավաղվում են, ավելացվում են նոր թվեր, որի պատճառով էլ ծածկագրերը կարդալ չի լինում [13]: ՀՀ պատվիրակությանն իրազեկված լինելու հնարավորությունից զրկելու նպատակով թուրքական կառավարությունն ամեն կերպ խոչընդոտում էր ՀՀ կառավարության հետ պատվիրակության կապի անխափան իրականացմանը: Թեև պատվիրակությունը հունիսի 19-ից գտնվում էր Կ. Պոլսում, սակայն Ալ. Խատիսյանն իր օրագրության մեջ դեռ սեպտեմբերի 7-ին գրում է. «Կովկասեն ոչ մեկ լուր կամ նամակ» [2, 119]: Թուրքերը մտածված ձևով հայկական պատվիրակությանը կղզիացրել էին մայր երկրից, որից ոչ մի լուր կամ հաղորդակցություն չկար: Թուրքերին պետք չէր, որ Կ. Պոլսում պատվիրակությունը իրազեկված լիներ տեղի անցքերի ու իրադարձությունների մասին, քանի որ Հայաստանի մեջ կատարվածը հակադիր էր միանգամայն իրենց խոստումներին և բնավ չէր համապատասխանում իրենց բարեկամական վերաբերումին, ուստի պետք չէր, որ իմանային հայ պատվիրակները՝ Պոլսում աղմուկ չհանելու համար: Այսպես. հոկտեմբերի 11-ի նիստում կարդացվեց Թիֆլիսից Ա. Ջամալյանի հոկտեմբերի 9-ին ուղարկած հեռագիրը, որը նախ հաղորդում էր, որ թուրք կառավարության ներկայացուցիչները դժվարություններ են ստեղծում մեր կուրիերները ուղարկելու խնդրում և երկրորդ, որ Ղարաբաղի խնդրի շուրջը կարող են բարդություններ առաջ գալ, և խնդրում է միջոցներ ձեռք առնել դրանց դեմ [3, 252]:

1918 թ. հոկտեմբերի առաջին օրերին թուրքերը վերջապես որոշում են տարհանվել Բաթումի պայմանագրի ուժով զինագրաված շրջաններից, ինչպես նաև այն տարածքներից, որոնք ինքնակամ զինագրավել էին, ինչպես, օրինակ, Ալեքսանդրապոլի շրջանը: Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը Բեռլինում գտնվող հայկական պատվիրակ-

¹ Խոսքը վերաբերում է 1918 թ. Թիֆլիսում ռուսերենով հրատարակված Ա. Շահխաթունու «Административный передел Закавказского края» գրքին:

կուրթյանը պաշտոնապես իրազեկում է, որ թուրքերը պետք է հետևեն այն սահմաններին, որ որոշվել է Բրեստ-Լիտովսկում: Թուրքական կողմը նույնի մասին պաշտոնապես հայտարարում է այնտեղ գտնվող հայկական պատվիրակությանը և նրա հետ բանակցությունների մեջ է մտնում՝ կապված Հայաստանին վերադարձվելիք տարածքների հետ [16, 72]:

Հոկտեմբերի վերջերին, երբ օսմանյան պատվիրակությունը պատրաստվում էր նավարկել Լեմնոս կղզի՝ հաշտություն խնդրելու, պատվիրակության ղեկավար Հուսեյն Ռաուֆ բեյը իր մոտ է հրավիրում Ալեքսանդր Խատիսյանին՝ համոզելու ուղեկցել իրեն՝ իբրև վկայություն հայ-թուրքական ջերմ սրտակցության: «Նա նշեց, թե որպես փոխհատուցում, թուրքական կառավարությունը կհանձնի Կարսը և Արդահանը, կվերականգնի 1914 թ. սահմանները և նույնիսկ հնարավոր է՝ կհամաձայնի լրացուցիչ մանր տարածքային ճշգրտումներ կատարելու հոգուտ Հայաստանի» [3, 94],- գրում է Ալ. Խատիսյանը: Հայկական պատվիրակությունը, ենթադրյալ թուրքական զիջումները անընդունելի գտնելով [3, 94], հրաժարվեց Հուսեյնի Ռաուֆի առաջարկն ընդունելուց և մնաց Կոստանդնուպոլսում, մինչև Մուղղոսի զինադադարի պայմանները հայտնի դարձան, և քառամյա սպասումից հետո վերադարձավ Հայաստան [6, 35]:

Եզրակացություն

Բաթումի պայմանագիրը վերանայելու նպատակով Կ. Պոլսում հրավիրված կոնֆերանսը այդպես էլ չկայացավ: Թուրքերն ամեն կերպ փորձում էին կառչած մնալ Բաթումի պայմանագրից, հատկապես այն կետերից, որոնք վերաբերում էին Հայաստանին: Բանակցությունների ընթացքում թուրքական կողմից շողոքոքությունների պակաս չեղավ, սակայն գործնական քայլերը բացակայում էին: Տարածքային հարցերում Թուրքիան անվերապահ աջակցեց Ադրբեջանին ու վճռականորեն դեմ արտահայտվեց Ղարաբաղն ու Զանգեզուրը Հայաստանին տալու հարցին: Հայ-թուրքական բանակցությունների ընթացքում քննարկված հարցերն այդպես էլ լուծում չստացան:

Գրականություն

1. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:
2. Խաչատրյան Աստ., Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010:
3. Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:
4. Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության մարմինների ստեղծումը, Երևան, 2009:
5. Հայոց պատմություն, հ.4, մաս առաջին, Եր., 2010:
6. Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1996:
7. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Երևան, 2005:
8. Ղուլյան Յու., Ռուսաստանի իշխանությունների դիրքորոշումը Հայաստանի Հանրապետության անկախության վերաբերյալ 1918-1920 թթ., Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2017:
9. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:
10. «Հայրենիք», Բոստոն, 1924, դեկտեմբերի 1:
11. ՀԱԱ, ֆ. 222, ց.1, գ. 12, թ. 75 :
12. ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.657, թ. 125:
13. ՀԱԱ, ֆ. 222, ց.1, գ.12, թ.74 :
14. ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.657, թ. 125:
15. Армянский вопрос и геноцид армян в Турции (1918-1919) (материалы политического архива Министерства иностранных дел кайзеровской Германии, новые документы), Ереван, 1995.
16. Туманян М., Дипломатическая история Республики Армения 1918-1920гг., Ер., 2012.

Армяно-турецкие переговоры на Константинопольской конференции

Гулян Юрик

Резюме

Ключевые слова: Республика Армения, Турция, Батум, Брест-Литовск, Карабах, Зангезур, конфедерация

Подписание Батумского договора произошло без участия союзников Турции. Германия, следуя Брест-Литовскому договору, выступила с предложением пересмотреть резолюции, принятые в Батуме. Было решено создать мирную конференцию в Константинополе, на которой должны были урегулировать все спорные вопросы между Турцией и Кавказом, а также пограничные вопросы между Закавказскими республиками. Для Республики Армения жизненно необходимым было международное признание ее независимости и обеспечение мирных условий для проживания народа. Высокопоставленным турецким руководителям армянская делегация представила катастрофическое положение населения Армении, бедственное состояние беженцев, отсутствие возможностей для жизнедеятельности в силу ограниченности территории страны. Желая превратить конференцию в простую формальность, турки подчеркивали, что в Батуме все уже было завершено, договор подписан, поэтому осталось только техническое подписание со стороны ведущих держав. В ходе переговоров турецкая сторона вела себя лицемерно при полном отсутствии практических шагов. В территориальном вопросе Турция беспрекословно поддерживала Азербайджан и решительно выступила против передачи Карабаха и Зангезура Армении. В ходе армяно-турецких переговоров одним из основных обсуждаемых вопросов был предложенный турками вопрос о создании союза между Турцией и Арменией. Проект Энвера-паши не вызвал никакого воодушевления у правительства Армении, поэтому армянская сторона не спешила с ответом. Армяно-турецкие переговоры в Константинополе не дали никакого результата, а конференция так и не состоялась.

Armenia-Turkey Negotiations in the Constantinople Convention

Ghulyan Yurik

Summary

Key words: *Republic of Armenia, Turkey, Batum, Brest-Litovsk, Karabakh, Zangezur, confederation*

The Treaty of Batum was signed without Turkey's allies being present. On the basis of Brest-Litovsk agreement, Germany put forward a suggestion of reviewing the decisions made in Batum. It was planned to convene a peace conference where all the unresolved issues between Turkey and Caucasus, as well as issues, relating to borders between the Transcaucasian republics were to be solved. It was essential for the Republic of Armenia to gain international recognition of its independence, to extend the country's borders and ensure its security as well as to provide people with peaceful living conditions. The Armenian delegation introduced to the high-rank Turkish leaders the terrible status of Armenian population, the miserable condition of refugees and the lack of opportunities for vital activities because of the limited territories of the Republic. Trying to turn the conference into a simple formality, the Turks asserted that everything was settled in Batum, the treaty was signed, hence, the treaty was to be formally signed by the states. The negotiations were replete with flattery but lacked practical action from the Turkish side. As far as the border issues were concerned, Turkey was unreservedly supporting Azerbaijan and was strongly opposed to giving Karabakh and Zangezur to Armenia.

One of the key issues discussed during the Armenia-Turkey negotiations was establishing a union between Turkey and Armenia suggested by the Turks. The Armenian government was not enthusiastic about Enver Pasha's draft contract and had no intention to give an immediate answer. The Armenia-Turkey negotiations in Constantinople did not have an intended result and the convention did not take place.

Ներկայացվել է 04.10.2022 թ.

Գրախոսվել է 01.11.2022 թ.

Ընդունվել է սպագրությամբ 25.11.2022 թ.